


ԻՆՉԵՐ ԿԸ ՊԱՏՄԷ ՀԱՅ ԼԵԶՈՒՆ

Ազգի մը դարաւոր կեանքին պատմութիւնը արձանագրուած է անոր բնիկ լեզուին մէջ: Բառերը որով կազմուած է սյդ լեզուն, յաւիտեանական խորհրդանշաններ են որոնց մէջ կրնայ կարգալ լեզուին խորհուրդներուն ներուս (initié) մէկը, զանոնք խօսող ժողովուրդին բովանդակ անցեալը, ամենանին ժամանակներէ. մերթնո՛յն իսկ անոր ծագումէն սկսեալ, որովհետեւ լեզուն ազգերու ընկերական յարաբերութեանց իրբեւ գերագոյն միջնորդը, ամենէն կերպընկալ (plastique) տարրը եղած է խորագէտ կրելու համար իր ենթարկուած բոլոր շփումներուն դրոշմը: Եւ այդ դրոշմը թէեւ յաճախ այլափոխուած, բայց երբեք բոլորովին ջնջուած չէ: Ժամանակը յաճախ կրցած է փճոցնել ամենէն ամրակուռ պատմական յիշատակարանները, բայց անկարող եղած է ջնջելու յիշատակարաններուն ամենէն օգայինը, ամենէն ազազունը, յիշատակարան-բառերը որոնց մէջ մենք շատ անգամ կը նշմարենք հեաքերը զարհուրելի, ապշեցուցիչ հնութեան մը: Այդ յիշատակարան բառերը ոչի՛նչ կ'ըսեն, ոչի՛նչ կը պատմեն անտարբերներու որոնց աչքին քերականական պարզ տարրեր են՝ գաղափարներն արտայայտելու սահմանուած, բայց հետաքնին ուսումնասիրողի մը համար որ կը շահագրգռուի բառերու ներքին կեանքովը, որ գիտէ թափանցել՝ եթէ ներելի է ըսել, անոնց հոգեբանութեանը, անոնք գաղանխխորհուրդ լուռ վկաներ են որ ամբողջ հեքեաթունակ պատմութիւններ ծրարած կը պահեն իրենց ծոցին մէջ: Վերլուծէ՛ այդ բառերը, թափանցէ՛ անոնց կազմութեանը, քննէ՛ անոնց զարգացման ընթացքը

և կրած ձեւափոխութիւնները, համեմատէ՛ զանոնք ուրիշ բառերու հետ, և մանաւանդ ունեցիր քիչ մը յստակատես միտք, և ահա՛ լուռ վկան անակնկալ կերպով պերճաբարբառ պիտի խօսի և պիտի պատմէ ա՛յնպիսի զարմանալի բաներ որոնց մասին չէինք իսկ կասկածեր: Եթէ այս նկատողութիւնները ճշմարիտ են բոլոր լեզուներու համար, մասնաւորապէս ճշմարիտ են հայերէնի համար որ աշխարհի ամենանին լեզուներէն է: Այո՛, հայ լեզուն այ իր հնադարեան բառերովը կը պատմէ մեր ցեղին անցեալը, անոր վաղնջական ծագումը, անոր քաղաքակրթութեան զանազան փուլերը, անոր դժբախտ ու միանգա՛ւայն փառաւոր, ստրուկ ու միանգամայն դիւցազնական շրջանները, և դեռ ուրիշ շատ բաներ...: Ա՛ն, հայ լեզուն, կը պատմէ թէ մեր ցեղը ցեղակից է ամենէն փառաւոր և սղնուական ցեղին, հնդեւրոպականին, որուն քաղաքակրթութիւնը հնագոյնն ու բարձրագոյնն եղած է, որ ամէն դարու մէջ և երկրագունդի ամէն մասերուն վրայ ուր ցրուած են իր ճիւղերը, քաղաքակրթութեան ջահին ջահակիրն ու աննկուն ուսման հանդիսացած է, ուր յղացած է մարդկայնական մտածումներուն, տիկերական գաղափարներուն է՛ն ազնուագոյնները. որ բարութեան ու ճշմարտութեան, գեղեցկութեան և արդարութեան ըմբռնումն ունեցած է, որ ամենէն լայն զոհարութիւններն ընծայած է մեծ գաղափարներու յաղթանակին համար...:

Ա՛ն, հայ լեզուն, կը պատմէ թէ ինք հնդեւրոպական լեզուախումբին մէջ, հնդկերէնին, իրանեանին, յունարէնին ու լատիներէնին շափ անկախ ճիւղ մը կը կազմէ, և արմատակիցն է այն լեզուներուն որոնցմով գրուեցան հնդկական վսեմ Վեամներն ու գրադաշտական ոսկեղինիկ



Եղիւելի գերեզմանը (Ուսան)

Ձենտավեստան, յունական չքնաղ Իլիականն ու Ողիսականը և պարսիկ գո՛տար Շահնամէն և դեռ ուրիշ ա՛յնքան չնաչխարհիկ գիրքեր որոնց քով իրենց ուրոյն փայլերովը կը շողան նաեւ մեր Եզնիկն ու Աստուածաշունչի հայ անզուգական թարգմանութիւնը՝ տիպարական և բնագրական գեղեցկութեամբ :

Ա՛ն, հայ լեզուն, իր մէջ ընդունուած և իւրացուցած օտար տարրերուն, ինչպէս հնագոյն ասորեստանեան, դուրանական, պահլաւիկ-պարսիկ, և ապա հետզհետէ յունարէն, ասորերէն, արաբերէն, լատիներէն, թրքերէն և նորագոյն ֆրանսերէն փոխառեալ բառերու մթերքովը, և այդ իւրաքանչիւր լեզուէ առնուած բառերուն բնութեամբն ու յատկանշական կողմերովը կը պատմէ թէ՛ մեր ցեղը նախապատմական ու պատմական ժամանակներէ ի վեր ս՛րբպիտի ցեղերու հետ և ի՛նչպիսի պայմաններու տակ յարաբերութիւններն ու շփումներն ունեցած է, և այդ յարաբերութիւններն ի՛նչ աստիճան սերտ եղած են և ի՛նչ բնութիւն ունեցած են, զոր օրինակ՝ քաղաքակա՞ն բնութիւն ունին թէ՛ կրօնական, գրական, անտեսական կամ բնատանկան-բնկերական և այլն, որովհետեւ բառերը շատ լու կը յատկանշեն բոլոր այս հանգամանքները :

Ա՛ն, հայ լեզուն, իր Ե. դարու ոսկեղինիկ շրջանովը ուր անգիրէն գրաւոր լեզուի բարձրանալով գրականացաւ, այն վերին աստիճանի կանոնաւոր զմայլելի կերպով կատարելագործուած՝ անակնկալ ճոխութեամբը որով կը յայտնուի այդ դարուն, պերճաբարբառ կը պատմէ, կը վկայէ այն բարձր քաղաքակրթութիւնը՝ որուն յաջողած էր հասնիլ հայ ցեղը : Ազգի մը լեզուն ջինջ հայելին է անոր քաղաքակրթութեան և զարգացման մակարդակին, վասն զի լեզուն իսկ ինքնին արդէն ատեղծումն է քաղաքակրթութեան, որուն օրրատօրէական դարգացման պահանջներուն համեմատ օրէ օր կը ձօնանայ, և ցորչափ ժողովուրդի մը կեանքի պէտքերը կ՛աւելնան, կ՛այլազանուին, կը բարդանան, ցորչափ անոր մտածողութիւնը կը որի, կ՛ընդարձակի, զգացումներն ու ճաշակները կը

նրբանան, նո՛յն համեմատութեամբ ալ լեզուն ինքզինք կը ձօնացնէ՝ իրերու, գաղափարի նրբերանգներու, նորանոր բարդ զգացումներու համար նոր նոր բառեր յերկրելով, նորաստեղծելով, պատշաճեցնելով : Միեւնոյն կերպով, ցորչափ ազգի մը քաղաքակրթութիւնը անկման կը միտի, լեզուն ալ անոր հետ յետաշրջական ընթացք մը կ՛առնէ . օրէ օր կ՛աղքատանայ, կ՛անչքանայ, կը ուսմկանայ, միշտ մնալով նաւատարիմ հայելին զինք խօսող ժողովուրդին քաղաքակրթութեան : Եւ աւա՛ղ, Հայ լեզուն ալ՝ Ե. դարու մեծապայծառ, արփաշող շրջանէն վերջ օրէ օր կրած շիջելափառ անկումը, օրէ օր ենթարկուած ողորմելի ուսմկացումը մինչև անցեալ դարու սկիզբները ուր տեղի ունեցաւ լեզուին վերածնունդը՝ աշխարհարարի կաղապարին մէջ նորածուլուած և ֆրանսական գրականութեան կենսունակ հիւթերովը պատուաստուած արդի հայերէնով, այդ անկման շրջանի լեզուն ալ կը յատկանշէ հայ քաղաքակրթութեան աստիճանական անկումը՝ հաւաքածանքի, դժբաղդութիւններու, ճակատագրական ողբալի հարուածներու ազդեցութեան տակ :

Ու դեռ ասոնք մեր ցեղի կեանքին ընդհանուր ու լայն հատուածակողմերն են զոր կը ցոլացնէ հայ լեզուն : Ա՛ն, հայ լեզուն, մեր հին կեանքէն մանրամասնութիւններ, պզտիկ ջնջին բաներ, հէքեթուեակ դէպքեր ալ կրնայ պատմել ու պատմած իսկ է : Ունի բառեր որոնք մեր ցեղին մէկ հին հաւատալիքը կ՛անդադարածնեն, բառեր՝ որ հին սովորութիւն մը կը պատմեն, բառեր ու ոճեր՝ որոնք պզտիկ, սիրուն աւանդակէպեր կը խտացնեն իրենց մէջ . վե՛րջապէս մեր բոլոր հին ըմբռնումները, սովորութիւնները, կրօնքը, նախապաշարումները, մէկ խօսքով բովանդակ ժառանգական հոգեբանութիւնը կը կարգացուի անոնց մէջ :

Եւ տակաւին բան մը չեն ինչ որ մինչև հիմա հայ լեզուն կամ անոր բառերը պատմած են մեզի մեր անցեալ կեանքէն . գիտնական հետաքննին ուսումնասիրողներու ձեռքին տակ անոնք մէկիկ մէկիկ կը քննուին, կը վերլուծուին, կը բազդատուին ճի՛շդ ինչպէս բուսաբան մը կը քննէ բոյսերը . հետզհետէ անոնք պիտի բանան մեր առջեւ իրենց հաւատարմօրէն պահպանած դարաւոր գաղտնիքները, և մեզի պիտի պատմեն ա՛լ աւելի զարմանալի, անակնկալ բաներ . . . :

Սիրե՛նք մեր լեզուն և գիտակից լլսանք թէ՛ անոր ամէն մէկ բառին ու ոճին վրայ ու մէջն ու շուրջը մեր ցեղին կեանքէն, անոր արիւնէն ու միտէն, սիրտէն ու հոգիէն, փառքերէն ու դժբախտութիւններէն՝ եթէ ներելի է ըսել, հոսանուտային, աննիւթական մասնիկ մը, բան մը կառչած է ու կը սաւառնի անտեսանելի կերպով, ինչ որ կրնայ տեսնուիլ, յայտնուիլ այն պայծառատես միտքերուն որոնք լեզուարանական հոգեչափութեամբ օժտուած են . . . :

